ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Երկրաբանություն և աշխարհագրություն 1, 2014 *Геология и география*

Աշխարհագրություն

УДК 551.58

ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

Ա. Հ. ՊՈՏՈՍՅԱՆ*, Շ. Մ. ՔՈԼՅԱՆ, Ռ. Ռ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն, Հայաստան

Յուրաքանչյուր բնակավայրի կամ համայնքի զարգացման և հեռանկարի համար կարևորագույն դեր ունի բնակչության տարիքային խմբերի կառուցվածքը և դրանց հարաբերակցությունը: Հոդվածում ՀՀ գյուղական բնակչության ցուցանիշների վերլուծության և ընդհանրացման հիման վրա տրված է գյուղական բնակչության տարիքային կառուցվածքը, ինչպես նաև դրա տարբերությունն ըստ մարզերի: Վերլուծվում են գյուղական բնակչության հիմնական տարիքային խմբերը: Առանձնացվում են գյուղական համայնքների խմբեր ըստ տարիքային կառուցվածքի ցուցանիշների, ժողովրդագրական իրավիճակի, սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունների:

***Keywords*:** demographic situation, rural community, current population.

Ժողովրդագրական գործընթացների վերջնական արդյունքում ձևավորվում է տվյալ երկրի կամ բնակավայրի բնակչության տարիքային կառուցվածքը, որն իր անմիջական ազդեցությունն է թողնում ինչպես առանձին բնակավայրերի զարգացման և առաջընթացի, այնպես էլ տարաբնակեցման զարգացման վրա:

ՀՀ գյուղական առկա բնակչությունը կազմում է մոտ 1,23 մլն մարդ: Ըստ հիմնական տարիքային խմբերի այն ունի հետևյալ պատկերը: Մինչև 15 տարեկանները կազմում են ընդհանուր բնակչության 20,5%, աշխատանքային տարիքի բնակչությունը՝ 67,3%, իսկ մեծահասակներինը՝ 12,2% (բոլոր տվյալները բերված են 01.01.2012 թ. դրությամբ) [1]: ՀՀ գյուղական բնակչության տարիքային կառուցվածքն ըստ մարզերի առանձնանում է որոշակի տարբերություններով, որի ընդհանրացված պատկերը բերված է աղյ. 1-ում:

Տարիքային հիմնական խմբերից մինչաշխատունակ բնակչության բաժինն առավել բարձր է Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերում, իսկ Լոռու, Վայոց ձորի և Շիրակի մարզերում այն ցածր է հանրապետական միջին ցուցանիշից:

Աշխատանքային տարիքի բնակչության ամենամեծ բաժին ունի Կոտայքի մարզը, միչդեռ Տավուշի մարզում այն զգալիորեն զիջում է հանրապետական միջինին: Մեծ է տարբերությունը հետաշխատունակ տարիքի բնակչության քանակի մարզային բաշխման մեջ: Այդ ցուցանիշով ամենաբարձր (Տավուշ) և ամենացածր (Գեղարքունիք) տվյալներ ունեցող մարզերի միջև տարբերությունը շուրջ 5,6 տոկոսային կետ է:

* E-mail: aksel.potosyan@yandex.ru

Գիտական և կիրառական տեսակետից առավել մեծ կարևորություն և հետաքրքրություն է ներկայացնում ՀՀ գյուղական առկա բնակչության հիմնական տարիքային խմբերի բաշխման վերլուծությունն ըստ գյուղական համայնքների, որը հնարավորություն է տալիս բացահայտել և առանձնացնել գյուղական համայնքների ու բնակավայրերի այնպիսի խմբեր, որոնք միմյանցից տարբերվում են բնակչության հիմնական տարիքային խմբերին բնորոշ առանձնահատկություններով, զարգացման միտումներով և հեռանկարով: Այդպիսի խմբերի առանձնացման համար որպես չափանիշ ընտրվել է ՀՀ գյուղական առկա բնակչության մեջ հիմնական տարիքային խմբերի հանրապետության միջին տոկոսային ցուցանիշները:

Աղյուսակ 1

ՀՀ գյուղական բնակչության բաշխումն՝ ըստ հիմնական տարիքային խմբերի [1]

Մարզեր	Ընդամենը, բացարձակ թվերով և %-ով						Ողջ բնակչությունը
	մինչաշխատունակ		աշխատունակ		հետաշխատունակ		
	բացարձակ թվով	նույնը, %	բացարձակ թվով	նույնը, %	բացարձակ թվով	նույնը, %	
Արագածոտն	24988	21,6	76357	65,9	14485	12,5	115830
Արարատ	42888	20,4	143917	68,4	23640	11,2	210445
Արմավիր	41813	20,3	141085	68,4	23216	11,3	206114
Գեղարքունիք	36423	21,8	112221	67,3	18122	10,9	166766
Լոռի	22014	18,9	77536	66,8	16600	14,3	116150
Կոտայք	25528	20,4	86036	68,7	13726	10,9	125290
Շիրակ	24743	19,8	85076	68,1	15041	12,1	124860
Սյունիք	10140	20,6	31565	64,1	7552	15,3	49257
Վայոց Ձոր	7500	19,7	25427	66,7	5203	13,6	38130
Տավուշ	16588	20,9	49629	62,7	12973	16,4	79190
ՀՀ-ում	252625	20,5	828849	67,3	150558	12,2	1232032

Գյուղական ցանկացած համայնքի ու բնակավայրի զարգացման և հեռանկարի առումով կարևորագույն դեր ունի բնակչության տարիքային կառուցվածքում աշխատունակ բնակչության տեսակարար կշիռը: Դրա համեմատաբար բարձր ցուցանիշի դեպքում բնակավայրը կարող է ապահովված լինել աշխատանքային ռեսուրսներով (երբեմն ունենալ նաև աշխատանքային ռեսուրսների ավելցուկ) ինչը նպաստում է գյուղատնտեսության աշխատատար և ինտենսիվ ճյուղերի զարգացմանը և բնակավայրի սոցիալ-տնտեսական առաջընթացին, հակառակ դեպքում գյուղատնտեսության ինտենսիվացման և բնակավայրի սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունները նվազում են [2, 3]:

Հանրապետության գյուղական համայնքների 48,7%-ում աշխատանքային տարիքի բնակչության քանակը բարձր է կամ հավասար հանրապետական միջինին (այդպիսի համայնքները մեծ թիվ են կազմում Արմավիրի, Արարատի, Կոտայքի և Շիրակի մարզերում), իսկ մնացած համայնքներում այն ցածր է միջին ցուցանիշից, այդպիսիք շատ են Տավուշի, Սյունիքի և Լոռու մարզերում: Տավուշի մարզի գյուղական համայնքներից շուրջ 91%-ում աշխատունակ բնակ–չության բաժինը ցածր է ՀՀ-ի միջին ցուցանիշից, իսկ 28,1%-ում՝ այն չի հասնում նույնիսկ 60%-ի, Բարեկամավան համայնքում՝ կազմում է ընդամենը 45,7%:

Գյուղական բնակավայրերի զարգացման և հեռանկարի առումով բացի աշխատունակ բնակչության տեսակարար կշռից էական դեր ունի նաև մեծահասակ բնակչության մասնաբաժինը բնակչության ընդհանուր թվաքանակում: Վերջինիս բարձր լինելու դեպքում նվազում են տվյալ բնակավայրի բնակչության բնական աճի ցուցանիշները և մեծանում բնակչության ծերացման նախադրյալները:

Աղյուսակ 2

ՀՀ տարածաշրջանների գյուղական համայնքների բնակչության հիմնական տարիքային խմբերի տոկոսային մեծությամբ ՀՀ միջինից բարձր և ցածր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքների թիվը [1]

Մարզեր և տարածաշրջաններ	ՀՀ միջինից բարձր և ցածր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքների թիվը						Ընդամենը
	աշխատունակ		հետաշխատունակ		մինչաշխատունակ		
	բարձր	ցածր	բարձր	ցածր	բարձր	ցածր	
***Արագածոտն*, %**	**47,3**	**52,7**	**38,4**	**61,6**	**51,8**	**48,2**	**112**
Արագած	3	19	7	15	20	2	22
Աշտարակ	21	9	11	19	7	23	30
Ապարան	13	7	9	11	4	16	20
Թալին	16	24	16	24	28	12	40
***Արարատ*, %**	**67,7**	**32,3**	**30,1**	**69,9**	**44,1**	**55,9**	**93**
Արտաշատ	29	9	9	29	11	27	38
Արարատ	15	14	11	18	18	11	29
Մասիս	19	7	8	18	12	14	26
***Արմավիր*, %**	**69,1**	**30,9**	**25,5**	**74,5**	**43,6**	**56,4**	**94**
Արմավիր	21	16	15	22	17	20	37
Բաղրամյան	13	2	1	14	7	8	15
Էջմիածին	31	11	8	34	17	25	42
***Գեղարքունիք*, %**	**47,7**	**52,3**	**40,7**	**59,3**	**57,0**	**43,0**	**86**
Գավառ	9	2	1	10	2	9	11
Կրասնոսելսկ	3	11	12	2	5	9	14
Մարտունի	11	5	0	16	14	2	16
Սևան	7	3	3	7	6	4	10
Վարդենիս	11	24	19	16	22	13	35
***Լոռի*, %**	**41,9**	**58,1**	**69,5**	**30,5**	**37,1**	**62,9**	**105**
Գուգարք	6	15	16	5	8	13	21
Թումանյան	7	20	24	3	8	19	27
Սպիտակ	13	7	11	9	8	12	20
Ստեփանավան	10	8	12	6	4	14	18
Տաշիր	8	11	10	9	11	8	19
***Կոտայք*, %**	**66,7**	**33,3**	**28,3**	**71,7**	**41,7**	**58,3**	**60**
Կոտայք	19	11	9	21	12	18	30
Նաիրի	12	4	3	13	6	10	16
Հրազդան	9	5	5	9	7	7	14
***Շիրակ*, %**	**60,9**	**39,1**	**34,8**	**65,2**	**42,6**	**57,4**	**115**
Ախուրյան	24	9	11	22	7	26	33
Ամասիա	9	9	1	17	11	7	18
Անի	11	5	4	12	7	9	16
Աշոցք	14	11	11	14	15	10	25
Արթիկ	12	11	13	10	9	14	23
***Սյունիք*, %**	**18,8**	**81,2**	**80,2**	**19,8**	**43,6**	**56,4**	**101**
Գորիս	5	18	16	7	17	6	23
Կապան	4	31	32	3	5	30	35
Մեղրի	1	10	10	1	3	8	11
Սիսիան	9	23	23	9	19	13	32
***Վայոց ձոր*, %**	**50,0**	**50,0**	**66,7**	**33,3**	**26,2**	**73,8**	**42**
Եղեգնաձոր	18	8	14	12	3	23	26
Վայք	3	13	14	2	8	8	16
***Տավուշ*, %**	**8,8**	**91,2**	**86,0**	**14,0**	**54,4**	**45,6**	**57**
Իջևան	2	22	19	5	19	5	24
Նոյեմբերյան	2	15	14	3	7	10	17
Տավուշ	1	15	16	0	5	11	16
Ընդամենը ՀՀ-ում, %	**48,7**	**51,3**	**48,3**	**51,7**	**44,9**	**55,1**	**865**

Վերջիններս իրենց բացասական ազդեցությունն են թողնում բնակավայրի սոցիալ-տնտեսական զարգացման ու առաջընթացի վրա և հարյուրավոր փոքր ու միջին մեծության գյուղեր կարող են հայտնվել բնազրկման վտանգի առաջ:

ՀՀ գյուղական համայնքների 48,3%-ում մեծահասակ բնակչության մասնաբաժինը բարձր է հանրապետական միջին ցուցանիշից: Տավուշի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում գերակշռում են մեծահասակ բնակչության տոկոսային բարձր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքները: Այստեղ գյուղական համայնքներից 231-ում (75,7%) մեծահասակ բնակչության մասնաբաժինը բարձր է հանրապետության միջին ցուցանիշից: Այսպիսի համայնքներն առավել շատ են Տավուշի մարզում շուրջ 86,0%, իսկ մարզի 38 համայնքներում (66,7%) մեծահասակ բնակչության բաժինը մեծ է 15%-ից, դրանցից 9-ում՝ 20%: Որոշ համայնքներում մեծահասակ բնակչությունը 25% ավելին է, իսկ Բարեկամավան գյուղում կազմում է 37,5%:

Իրենց նշանակությամբ գյուղական բնակավայրի բնակչության տարիքային կառուցվածքում առանձնահատուկ դեր ունեն մինչաշխատունակ բնակչության բացարձակ թիվը և տեսակարար կշիռը, ինչով պայմանավորված է գյուղական բնակավայրերում կրթամշակութային, առողջապահական, սպորտային և սոցիալական որոշակի ծառայությունների զարգացման մակարդակը, աշխատանքային տարիքի բնակչության համալրումը նորերով և սոցիալ-տնտեսական բնույթի մի շարք այլ խնդիրների լուծումը: Քանի որ հանրապետության հարյուրավոր գյուղական բնակավայրերում կրթամշակութային և առողջապահական հաստատությունների պահպանումն ու հետագա զարգացումը մեծապես պայմանավորված են նաև տվյալ գյուղական բնակավայրի բնակչության տարիքային կառուցվածքով, մասնավորապես՝ դպրոցահասակ երեխաների թվաքանակով:

ՀՀ գյուղական համայնքների թվաքանակում մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ հանրապետության միջինից (20,5%) մեծ և փոքր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքների թվաքանակների միջև տարբերությունն էլ ավելի մեծ է: Այդ ցուցանիշով ՀՀ-ի միջինից փոքր մեծություն ունեցող բնակավայրերի թիվը 10,6%-ով գերազանցում է հանրապետության միջինից մեծ ցուցանիշ ունեցող գյուղական համայնքների թվին: ՀՀ մարզերից յոթում, գյուղական համայնքների թվաքանակում ավելի մեծ թիվ են կազմում մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ-ի միջին ցուցանիշից փոքր մեծություն ունեցող գյուղերը (աղյ. 2): Այդ մարզերի գյուղական համայնքների 59,2%-ում մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությունը փոքր է հանրապետության միջին ցուցանիշից: Այդպիսի գյուղական համայնքներն ավելի մեծ տոկոս են կազմում Վայոց ձորում (աղյ. 2): Լոռու մարզի չորս տարածաշրջաններում, բացի Տաշիրից, գյուղական համայնքների թվաքանակում ավելի մեծ թիվ են կազմում մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջին ցուցանիշից փոքր մեծություն ունեցող գյուղական համայնքները (աղյ. 2):

Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Արարատի և Արմավիրի մարզերում, բացի Ամասիայի, Աշոցքի, Գորիսի, Սիսիանի և Արարատի տարածաշրջաններից, մնացածներում ավելի մեծ թիվ են կազմում մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ միջինից փոքր մեծություն ունեցող բնակավայրերը: Հրազդանի տարածաշրջանում այդպիսի գյուղական համայնքների թվերն իրար հավասար է:

Գեղարքունիքի և Տավուշի մարզերում, գյուղական համայնքների ընդհանուր թվաքանակում գերակշռում են մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջին ցուցանիշը գերազանցող գյուղական համայնքները, սակայն Գավառի, Կրասնոսելսկի, Տավուշի և Նոյեմբերյանի տարածաշրջաններում ավելի մեծ թիվ են կազմում այդ ցուցանիշից փոքր մեծություն ունեցող գյու-

ղական համայնքները: Նմանատիպ պատկեր կան նաև Արագածոտնի մարզում: Այստեղ ևս գյուղական համայնքների 51,8% կազմող բնակավայրերում մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությունը բարձր է ՀՀ-ի միջին ցուցանիշից, սակայն մարզի Աշտարակի և Ապարանի տարածաշրջաններում 50 գյուղական համայնքներից 39-ում մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությունը փոքր է ՀՀ միջին ցուցանիշից՝ 20,5%-ից: Այսպիսով ՀՀ գյուղական համայնքների բնակչության մինչաշխատունակ տարիքային խմբի տարածաշրջանային վերլուծությունը ցույց է տալիս, որ 37 տարածաշրջանից 23-ում ավելի մեծ թիվ են կազմում մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջին ցուցանիշից փոքր մեծություն ունեցող գյուղական համայնքները:

Վերը բերված վերլուծության արդյունքներն ավելի ամբողջական կլինեն եթե կատարենք գյուղական համայնքների բնակչության հիմնական տարիքային խմբերի ցուցանիշների համադրում և գյուղական համայնքների առանձին խմբերի առանձնացում, որոնք միմյանցից տարբերվում են բնակչության տարիքային կառուցվածքի ու ժողովրդագրական իրավիճակի պատկերով և սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորություններով:

Այդպիսի խմբերի առանձնացման համար հիմք է ընդունվել գյուղական համայնքների բնակչության տարիքային հիմնական խմբերի տոկոսային բաժինների տարբեր զուգակցումները: Դրանց հիման վրա համակարգչային ծրագրի օգնությամբ առանձնացրել ենք ՀՀ գյուղական համայնքների 5 խումբ և մեկ ենթախումբ, որոնք տարբերվում են բնակչության տարիքային հիմնական խմբերի ու ժողովրդագրական իրավիճակի ցուցանիշներով և, իհարկե, նաև սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորություններով:

Առաջին խմբում առավել բարենպաստ ժողովրդագրական իրավիճակ և սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորություններ ունեցող գյուղական համայնքներն են, որոնցում աշխատունակ և մինչաշխատունակ տարիքի բնակչության բաժինը հանրապետական միջինից բարձր է: ՀՀ-ում կա այդպիսի 107 համայնք: Դրանք առավել շատ են Արագածոտնի (15), Արարատի (18), Արմավիրի (17), Գեղարքունիքի (14) և Շիրակի (20) մարզերում, իսկ քիչ՝ Լոռու (9), Սյունիքի (2), Տավուշի (3) և Վայոց ձորի (1) մարզերում:

Երկրորդ խմբում բարենպաստ ժողովրդագրական իրավիճակ և հնարավորություններ ունեցող գյուղական համայնքներն են որտեղ աշխատունակ տարիքի բնակչության բաժինը բարձր է միջին հանրապետական ցուցանիշից, իսկ մինչաշխատունակ տարիքի բնակչության բաժինը չգերազանցելով՝ մոտ է ՀՀ միջին ցուցանիշին: ՀՀ-ում կա այդպիսի 62 համայնք: Այս խմբի բնակավայրը ավելի շատ են Արմավիրի (13), Կոտայքի (11), Շիրակի (10), Արագածոտնի (13) և Արարատի (8) մարզերում, քիչ՝ Լոռու (3), Սյունիքի (3) և Վայոց ձորի (1) մարզերում: Տավուշի մարզում այդպիսի գյուղական համայնք չկա:

Երրորդ խմբում լավ ժողովրդագրական իրավիճակ և հնարավորություններ ունեցող գյուղական համայնքներն են: Այս խմբի գյուղական համայնքներում աշխատունակ տարիքի բնակչության բաժինը չգերազանցելով՝ մոտ է ՀՀ միջին ցուցանիշին, իսկ մինչաշխատունակ բնակչության բաժինը մեծ է 19,5%-ից: ՀՀ-ում կա այդպիսի 29 համայնք: Սրանք թվաքանակով ավելի շատ են Արմավիրի մարզում (8), իսկ մնացած մարզերում դրանց թիվը տատանվում է մեկից չորսի սահմաններում:

Չորրորդ խմբում բավարար ժողովրդագրական իրավիճակ և հնարավորություններ ունեցող գյուղական համայնքներն են: Դրանցում աշխատունակ բնակչության բաժինը գերազանցում է 67,3%-ը, իսկ մինչաշխատունակ բնակչության բաժինը փոքր կամ հավասար է ՀՀ միջին (20,5%) ցուցանիշից, բայց վերջինից 1,5

անգամից ոչ պակաս: Այս խումբն ամենախոշորն է: Ընդգրկում է 300-ից ավելի գյուղական համայնք: Այդպիսիք ավելի քիչ են Տավուշի (5) և Սյունիքի (17) մարզերում, շատ են Արագածոտնի (39), Արարատի (44), Արմավիրի (48), Լոռու (42) և Շիրակի (45) մարզերում:

Հինգերորդ խմբի մեջ մտնող գյուղական համայնքները ժողովրդագրական իրավիճակի և սոցիալ-տնտեսական զարգացման առումով ունեն *վատ* պայմաններ: Այդ համայնքներում մինչաշխատունակ բնակչության բաժինը փոքր է ՀՀ միջին ցուցանիշից (20,5%), իսկ մեծահասակ բնակչության բաժինը մեծ է ՀՀ միջին (12,2%) ցուցանիշից: Այս խմբի մեջ մտնում են շուրջ 244 գյուղական համայնք բոլոր մարզերից: Այդպիսիք են Սյունիքի գյուղական համայնքների գրեթե կեսը (51 համայնք), 46 գյուղական համայնք Լոռու մարզից, 26-ական համայնք Շիրակի և Տավուշի մարզերից, 17 համայնք Վայոց ձորից, 23 համայնք Արագածոտնից: Թվաքանակով և տոկոսային մեծությամբ դրանք առավել քիչ են Արարատի (17 համայնք), Արմավիրի (11), Կոտայքի (11) և Գեղարքունիքի մարզերում: Այս խմբից կարելի է առանձնացնել ենթախումբ կամ պայմանականորեն 6-րդ խումբ: Դրանք այն գյուղական համայնքներն են, որոնք ժողովրդագրական առումով գտնվում են *շատ վատ* կամ *ծայրահեղ վատ* իրավիճակում: Այդպիսի գյուղական համայնքներում մինչաշխատունակ բնակչության բաժինն ավելի քան 1,5 անգամ պակաս է ՀՀ միջին ցուցանիշից, իսկ մեծահասակ բնակչության բաժինն ավելի քան 1,5 անգամ գերազանցում է ՀՀ միջին ցուցանիշը:

Այս կարգավիճակում են ՀՀ 30 գյուղական համայնք, որի կեսից ավելին (17 համայնք) գտնվում են Սյունիքում, չորս համայնք Լոռու մարզում, 3 համայնք Արագածոտնում, երկուական համայնք Գեղարքունիքում և Շիրակում, մեկական համայնք Տավուշի և Վայոց ձորի մարզերում, իսկ Արարատի և Արմավիրի մարզերում այդպիսիք բացակայում են: Վերը բերված խմբերը ընդգրկում են ՀՀ 759 գյուղական համայնք (հանրապետության համայնքների 87%):

Այսպիսով, ՀՀ գյուղական առկա բնակչության տարիքային կառուցվածքի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ.

1) վերջին երկու տասնամյակում ՀՀ-ում ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակն իր անմիջական ազդեցությունն է թողել գյուղական բնակչության տարիքային կառուցվածքի վրա;

2) հանրապետության մարզերի և տարածաշրջանների գյուղական բնակչության բաշխումն՝ գյուղական համայնքների մակարդակով, ըստ հիմնական տարիքային խմբերի ունի նկատելի տարբերություններ;

3) հանրապետության հարյուրավոր գյուղական համայնքներում և բնակավայրերում առաջացել է առկա բնակչության տարիքային հիմնական խմբերի ոչ նպաստավոր իրավիճակ՝ տարիքային հիմնական խմբերի տոկոսային մեծությունների նկատելի շեղումներ հանրապետության միջին ցուցանիշից, որն իր անմիջական ազդեցությունն է թողնում այդ գյուղերի ժողովրդագրական գործընթացների և բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման վրա;

4) ՀՀ միջին ցուցանիշի համեմատ գյուղական համայնքների բնակչության տարիքային հիմնական խմբերի տոկոսային մեծությունների առավել ակնհայտ տարբերություններ կան հատկապես Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի և Լոռու մարզերում, որոնք առանձնանում են լեռնային բարդ ռելիեֆով, բնական համալիրի տարրերի բազմազանությամբ, սահմանամերձ ու ծայրամասային դիրքով, տարածաշրջանային իրավիճակով և վերջապես սոցիալ-տնտեսական զարգացման առավել սուր հիմնախնդիրներով;

5) ՀՀ գյուղական համայնքներից բնակչության տարիքային հիմնական խմբերի, ժողովրդագրական գործընթացների և սոցիալ-տնտեսական զարգաց-

ման համար առավել բարենպաստ, բարենպաստ և լավ իրավիճակ ունեն ընդամենը 198 գյուղական համայնք, բավարար իրավիճակ՝ մոտ 300 գյուղական համայնք, իսկ վատ և շատ վատ իրավիճակ՝ շուրջ 244 գյուղական համայնք (ՀՀ գյուղական համայնքների 28%-ից ավելին);

6) ՀՀ-ում առավելապես կենտրոնական դիրք ունեցող և մայրաքաղաքին մոտ ընկած մարզերում ու տարածաշրջաններում գերակշռում են ժողովրդագրական գործընթացների և սոցիալ-տնտեսական զարգացման առումով քիչ թե շատ լավ և բարենպաստ իրավիճակում գտնվող՝ իսկ հանրապետությունում ծայրամասային ու մերձսահմանային դիրք զբաղեցնող Սյունիքի, Վայոց Ձորի, Տավուշի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական զարգացման սուր հիմնախնդիրներով աչքի ընկնող Լոռու մարզերում ավելի մեծ թիվ են կազմում ժողովրդագրական գործնթացների և սոցիալ-տնտեսական զարգացման առումով վատ և շատ վատ իրավիճակ ունեցող գյուղական համայնքները:

Վերը բերված վերլուծության արդյունքներն ու ամփոփիչ եզրահանգումներում հիմք են տալիս պնդելու, որ ՀՀ գյուղական համայնքներում առկա բնակչության տարիքային կառուցվածքում ստեղծված իրավիճակը հանրապետական, մարզային և տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջում է իրականացնել սոցիալական, տնտեսական, ժողովրդագրական, հարկային և տարածաշրջանային այնպիսի քաղաքականություն, որոնք կնպաստեն գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը, ժողովրդագրական գործընթացների բարելավմանը և գյուղական համայնքներում բնակչության տարիքային կառուցվածքի առավել նպաստավոր իրավիճակի ձևավորմանը: Վերջինս իր հերթին դառնում է ՀՀ գյուղական համայնքների և տարաբնակեցման համակարգի զարգացմանն ու առաջընթացին նպաստող գործոն:

Ստացվել է՝ 01.10.2013

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012 թ., վիճակագրական ժողովածու: Եր., 2012:
2. **Մանասյան Մ.Գ.** ՀՀ տարաբնակեցման համակարգը: Եր., 2005:
3. **Պոտոսյան Ա.Հ.** ՀՀ գյուղական բնակչությունը և բնակավայրերը: Եր., 2013:

А. А. ПОДОСЯН, Ш. М. КОЛЬЯН, Р. Р. СТЕПАНЯН

УЛУЧШЕНИЕ ДЕМОГРАФИЧЕСКОЙ СИТУАЦИИ СЕЛЬСКОГО НАСЕЛЕНИЯ РА КАК ПРЕДПОСЫЛКА РАЗВИТИЯ СЕЛЬСКИХ ПОСЕЛЕНИЙ

Резюме

В развитии и перспективе какого-либо населенного пункта или общины важнейшую роль играет структура основных возрастных групп, а также их соотношение. В статье на основании обобщений и анализа показателей населения сельских общин РА (по состоянию на 01.01.2012 г.) дается возрастная структура сельского населения, а также ее различия по марзам. Анализируются

основные возрастные группы населения сельских общин. Выделяются группы по показателям возрастной структуры населения, демографической ситуации и по возможностям социально-экономического развития.

A. H. POTOSYAN, Sh. M. QOLYAN, R. R. STEPANYAN

IMPROVEMENT OF THE DEMOGRAPHIC SITUATION OF THE RURAL POPULATION RA, AS A PREREQUISITE FOR THE DEVELOPMENT OF RURAL AREAS

Summary

In the development and prospect of any settlement or community an important role plays the age structure of the population and the ratio of the age groups.

In the article on the base of age composition of the rural population in communities RA (2012.01.01) is given. The age structure of the rural population of RA, regional differences are given. Analysing rural community level of the distribution of the current population by age groups, as well as the main issues are given.